«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում «հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի» բառերը փոխարինել «գույքային բնույթի» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի 87-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը «83-րդ» բառից հետո լրացնել «կամ 106-րդ» բառերով։

Հոդված 3. Օրենսգրքի 440-րդ հոդվածում՝

- 1-ին մասում «երկուսից հինգ» բառերը փոխարինել «առավելագույնը երեք» բառերով։
- 2-րդ մասը «պատժվում է» բառից հետո լրացնել «հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ» բառերով։
- 3-րդ մասում «երկուսից հինգ» բառերը փոխարինել «մեկից չորս» բառերով։
- 4-րդ մասը «իրական» բառից առաջ լրացնել «Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած» բառերով, իսկ «պատժվում է» բառից հետո լրացնել «հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ» բառերով։
- լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: